ԷՐԱՏՈՒ

ԳԵՂԱՐԴԻ ՎԻՄԱՓՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ

Գեղարդի վանքը մեր մշակույթի այն կոթողն է, որի վիմափոր կառույցները անկրկնելի են իրենց պատրաստման արվեստով։ Այստեղ, բացի ժայռափոր խոշոր կառույցներից, կան նաև մեծ թվով արհեստական քարայրներ, որոնց մասին շատ քիչ բան է հայտնի։

Ստորև ներկայացնում ենք Գեղարդի անմատչելի վիմափոր կառույցներից մի քանիսը։

1. **Ճգնավորի Քարայր**—*Գտնվում է վանք տանող ճանապարհի ձախ կողմում։ Այն դեղին տուֆի մեջ փորված եռահարկ կառույց է, որի առաջին հարկը (գծ. 1 Ա) բաղկացած է սենյակից, կլոր խցից և դրանց միջև զետեղված ժայռափոր պատուհանից։ Երկրորդ հարկի (գծ. 1 Բ) ձախ կողմում գտնվում է մի կիսախավար սենյակ, դրանից աջ՝ մի քանի փորագիր խաչերով մատուռ, ավելի աջ փորված են երկու կլոր խցեր, որոնցում կարելի է տեղավորվել միայն ծնկաչոք։ Դրանք, հավանաբար, աղոթարաններ են։ Վերջիններիս առջևով ձգվում է ծածկված պատշգամբ, որն ավարտվում է սենյակով։ Երրորդ հարկը (գծ. 1 Գ) բաղկացած է երկու հատվածից մեծ ուղղանկյուն սենյակից և թաղման խցից, որտեղ, հավանաբար, թաղված է այդ նույն կացարանում ապրած որևէ հայտնի ճգնավոր։*

2. **Այրիվանեցու Քարայր**—*Գտնվում է վանքից արևմուտք։ Ըստ ավանդության այստեղ ճգնել է Մխիթար Այրիվանեցին։ Եվ իսկապես, կառույցի պատերից մեկի վրա պահպանված արձանագրության մեջ ասված է.*

> *... Ես բազմամեղ*
> *տր. Մխ[իթար] վ[ար]դ[ապետ]*
> *շինեցի զանապատս. Ես անուանեցի*
> *ժամատ*
> *անս տեղի անսրաղ աղաւթից*[1]

Սկզբում այստեղ եղել է բնական անմատչելի քարայր, որի աջ կողմում կառուցվել է պատշգամբ և բացվել դեպի այրը տանող սրբատաշ միջանցք (գծ. 2)։ Միջանցքի ձախ կողմում ուղղանկյուն սենյակ է եղել, որից մնացել է միայն մի պատ։ Հավանաբար, այդ սենյակում էլ նա գրել է իր աշխատությունները, այդ թվում նաև նշանավոր Ժամանակագրությունը։ Քարայրի առջևում ավելացվել է անդունդի վրա կախված փայտե պատշգամբ, իսկ աջ կողմում փորվել են մի քանի խցեր։ Դրանցից առաջինը ժայռակերտ բեմով փոքրիկ մատուռ է, որի արևմտյան պատի մեջ կա ավազան, իսկ արևելյան պատի վրա՝ դրսից փորագրված է հիշյալ արձանագրությունը։ Մատուռին կից են նկարանախուցը և կլոր աղոթարանը։ Կառույցը աչքի է ընկնում իր գեղեցկությամբ։

3. **Ճգնավորի կացարան**—*Գտնվում է Գեղարդի վանքի այգու վերևում (գծ. 3)։ Ունի երկու փոքր կից սենյակներ, աղոթարաններ և մի երկարավուն նկարան։ Առջևի պատշգամբը ունեցել է փայտե ծածկ։ Ձախից կառույցն ավարտվում է նեղ, խուլ միջանցքով։*

Այսպիսով, վերոհիշյալ երեք կառույցներն էլ կրկնում են Հայաստանի տարբեր շրջաններում պահպանված անմատչելի ճգնարանների և մասնավորապես մեր հայտնաբերած Արայի լեռան խառնարանի ճգնարանի բնորոշ գծերը։ Դա հիմք է տալիս ասելու, որ միջնադարյան Հայաստանում ճգնարանները կառուցվել են նենց որոշակի սկզբունքներից. այսինքն՝ ունեցել են անդունդին նայող ծածկված պատշգամբ, փոքր, երկարավուն նկարան և աղոթքի կիսախավար խուց, ուր կարելի էր մտնել միայն չորեքթաթ։

4. **Լուսավորչի Քարայր**—*Գտնվում է վանքից արևելք։ Մեր կարծիքով հիշատակված կառույցների մեջ սա ամենահինն է, որովհետև այս քարայրի պատերից դուրս ցցված քարակտորները հղկված չեն և նախնական տեսք ունեն։ Քարայրը ուղղանկյուն է (գծ. 4), պատերի մեջ կան բազմաթիվ խորշեր։ Մուտքը ժայռի փլուզման հետևանքով փակվել է, սակայն, հետագայում, առաստաղից բացվել է երկրորդ մուտքը։*

Լուսավորչի քարայրին կից նկատվում է մի շատ նեղ անցք, այն լայնացնելուց և մեծ դժվարությամբ ներս սողոսկելուց հետո հայտնաբեր-

---

[1] Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Մ. Այրիվանեցի. Նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 1։

վից կիսով չափ լցված մի փոքր մառան, որին կից կա մասամբ խցանված մի սենյակ։

5. Քառասուն ատրճաններ — Գտնվում է վան-վածք)։ Պահպանվել են դահլիճի կենտրոնական մասի քսաներկու ատրճանները, իսկ մնացածներն ավերված են։ Մեր կարծիքով, սա եղել է





2

քի դիմաց, գետի մյուս ափին և խիստ քայքայ-ված է անմատչելի ժայռերով։ Հայն (4 մ), ըն-դակի դեպի ցած իջնող այդ հսկայական սրբատաշ դահլիճը, ամենից առաջ, հիշեցնում է ժամանակակից մետրոյի կայարան (գծ. 5, կարբ-գաղտնարան, ուր վտանգի պահին թաքցվել է Գեղարդի վանքի հարստությունը։

6. Մառան — Գտնվում է նախորդից քիչ ցած։ Բարձր առաստաղով սրբատաշ կառույց է, որի պատերի վրա նկատվում են կարմիր որմնա-

նկարների հետքեր։ Պահպանվել է ժայռակերտ բեմը, անկյունում, ժայռի մեջ խոռոչ կա (գծ. 6)։

ժայռափոր ամրոց, ուր պատսպարվել են Գեղարդի և Հավուց Թառի եպիսկոպոսները. «Եվ ի լսելն զայս Ամիրգունայ խանին առնեալ









7. Դավրիժեցու հիշատակած քարայրը—Առաքել Դավրիժեցին Շահ-Աբասի արշավանքի կապակցությամբ նկարագրում է Գեղարդի ծորի մի զզօրան՝ որք ընդ իւրն էին՝ եկն ի Զոբն Գեղարգայ, և ինքն եկեալ եկաց առաջի այրին յորում էին եպիսկոպոսքն. և ձայնեալ ի բարձրանա՝

խոսէր ընդ նոսա խաղաղութեամբ գալ ի հնազանդութիւն հրամանաց Թագաւորին...»[2]։ Այս նկարագրության օգնությամբ մեզ հաջողվեց պարզել, որ խոսքը վերաբերվում է Գեղարդի ձորի, գետի ձախ ափին, բարձր ժայռի մեջ փորված անմատչելի ապաստարանին։ Բոլոր ժայռափոր բերդերի նման սա էլ ունի իր մատուռը (գծ. 7 Ա), որի բեմի մասում նկատվում են կարմիր ներկի մնացորդներ։ Մատուռին կից սենյակը, հավանաբար, նույնպես ունեցել է պաշտամունքային նշանակություն։ Սրանից վեր գտնվում են երկու խցեր (գծ. 7 $Ա_1$)։ Մատուռից քիչ հեռու տեղավորված է թոնրատունը, իսկ ժայռի վերևում՝ պահակակետերը, որտեղից պետք է խափանվեին պարաններով


7Ա



7$Ա_1$




8Ա.



8Բ

2 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 48։

ամրություն թափանցելու փորձերը։ Բուն ամրությունը սկզբում եղել է շատ բարձր առաստաղով մի մեծ, անմատչելի բնական քարայր։ Հետագայում փայտե միջնորմների օգնությամբ այն վերածվել է եռահարկ ամրոցի, ուր կարող էին պատսպարվել մի քանի հարյուր հոգի։ Այրի ձախ մասում փորվել է խոհանոց, պատի տակ՝ երկու հսկայական հոր, իսկ ավելի աջ՝ կիսակլոր խուց։ Առավել հետաքրքիր է ամրության աջ մասը։ Այն բաղկացած է դեղին տուֆի մեջ փորված երկու սենյակներից, որոնցից առաջինը այնուհետև, գեղեցիկ, սրբատաշ սրահ է։ Սենյակի կենտրոնական մասը մի փոքր խորացված է, իսկ երկու կողմերում պատրգամբներ են։ Աջակողմյան պատրգամբը սրահը միացնում է մյուս հատվածի հետ, որը զուսպ հորինվածքով սրբատաշ սենյակ է։

Հուշարձանը, որը մեր կարծիքով եղել է Գեղարդի վանքի գլխավոր ապաստարանը, ամրոցությամբ պահպանված է և այն կարելի է մատչելի դարձնել Գեղարդ այցելողների համար։

8. Ջիրոյի տեսը—Այս հուշարձանը գտնվում է Գեղարդի դժվարամատչելի, հեռավոր ձորերից մեկում։ Այն սպիտակ ավազաքարի մեջ փորված չորսհարկանի համալիր է, որը, սակայն, խիստ ավերված է։ Պահպանվել են հիմնականում երրորդ հարկը և չորրորդ հարկի մի մասը։ Սա ևս, հավանաբար, եղել է ժայռափոր բնակավայր։ Երրորդ հարկի (գծ. 8 Ա) աջ կողմում տեղավորված է Բոնրատուսը՝ իրեն կից խցով։ Ավելի ձախ տեղավորված է կառույցի հիմնական մասը։ Այն մի գեղեցիկ սրահ է, որի մեջ կան երեք կեղծ խորաններ։ Սրահի մանրամասների նուրբ մշակվածությունը շքեղ տեսք է տալիս նրան։ Անկասկած, թե սրահը, թե ամբողջ հուշարձանը Գեղարդի բոլոր քարայրներից ամենագեղեցիկն են։ Սրահից աջ և ձախ տարածվող միջանցքը բաժանված է առանձին հատվածների։ Մուտքը եղել է դիմացից։ Այդ մասում ևս նկատվում են սենյակների հետքեր։ Վերեում՝ դեպի չորրորդ հարկը տանող անցքից աջ, պահպանվել են մատուռի հետքեր, իսկ ավելի աջ՝ մի սենյակ, որը, հավանաբար, վարագույրի օգնությամբ բաժանվել է երկու մասի։ Մնացած սենյակների միայն հետքերն են պահպանվել։ Փաստորեն, կառույցի նուրբ կերտվածքը դարձել է նրա փլուզման պատճառ։

Կառույցի պատերից մեկի կիսամաշ վիճակը հուշում է վիմափոր կառույցներ փորելու տեխնիկայի մասին, սկզբում հսկա բրիչը ձայր մուրճի օգնությամբ, թեք դիրքով խրել են ժայռի կուրծքը և բրիչին կողքից հարվածելով պոկել ժայռի բեկորը։ Այդ եղանակով կառույցը փորելուց հետո անցել են նուրբ հատիչով պատերը հղկելուն։ Հավանաբար, այս նույն տեխնիկայով են պատրաստվել նաև Գեղարդի վանքի վիմափոր սրահները։

Այսպիսով, Գեղարդի ձորի ներկայացված վիմափոր կառույցների գերակշռող մասն ունեցել է պաշտամունքային նշանակություն, իսկ մնացածները՝ վանքի միաբանության համար ծառայել են որպես ապաստարաններ։ Թեև դրանք գտնվում են անմատչելի ժայռերի մեջ, բայց իրենց հորինվածքով հայկական միջնադարյան ճարտարապետության լավագույն ավանդույթների շարունակությունն են։

ԷԴՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ,
ՄԱՍԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ